

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեններ և տպածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

С 4 32-К
311

ԱՐԱՐԵՑՆԻԿՈՎ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՏԱՐԿԵՐ ՅԵԿ ՄԱՐԱՇՆԵՐ



ԽՍՀՄ ԺՈՂՈՎՐԴԻՐ. ԿԵՆՏՐՈՆԱԿ. ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ.

1931

891 715.

0-27

30 MAY 2011

ԻՄ ՓՈՔՐԻԿ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Ուզում եյի յեզ համար մի հաս զիրք զրել
մեր բանակի մասին:

Դրեցի-զրեցի, յեվ բանախ պակասեց, այն
ինչ — ընդամենը յերկու մակատամարտ եյի նկա-
րագրել:

Յեվ ահա յերեկ ինձ մի բան պատմեցին —
կարմիր-բանակայինի յեվ սպիտակ գեներալի
մասին:


Յես եղ վորոշեցի՝ զրել առայժմ այս կարա-
պատմորյունը: Հետո, յերբ յես ավելի շատ բա-
նամ կունենամ, մի զիրք կզրեմ ամբողջ Կար-
միր բանակի մասին:

Ն. Ռ.

ՎԻՃԱԿԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԱ
ՁՈՇՏՈԽՈՎԵԴՈՒ
ԱԿADEMIIA Nauk
СССР

Սովոր. Главл. В-192 Заказ № 1076 Тираж 8000

Книжная ф-ка Центриздана Народов СССР. Москва,
Шлюзовая набережная, 10.



ԳԵՆԵՐԱԼ ՍԵՄԻԿՈԼԵՆՈՎԸ

1918 թվի ամառը կողակների մայրաքաղաք Նովոչերկասկ յեկավ պատառուած կիսամուշտակ հագին, վալենկաներով մի մորուքավոր գյուղացի:

Նա մտավ մի տուն և յերեք ժամ այնտեղ մնաց: Յերբ նա դուրս յեկավ, նրա հագին կային փայլուն, յերկարաճիտ կոշիկներ, կարմիր լամպամներով վարտիկ և նոր համազգեստ՝ գեներալի ուսադիրներով:

Ակ թուրը չըխկչըխկում եր նրա կողքին:

Նա կառք նստեց և ասաց կառապանին:

— Տար ինձ պալատ — ատամանի մոտ: Ատամանը նստած իր առանձնասենյակում ուշադրությամբ դիտում եր քարտեզը:



56/13-66

Հյուրին տեսնելուն պես, նա վեր թռավ բաղկաթողից ու կանչեց.

— Գեներալ Սեմիկոլենով! Այդ վեր կողմերից:

Գեներալ Սեմիկոլենովը պատմեց, վոր բոյլ շեկներից ե փախել:

— Կարմիրներին շուտով վերջ կլինի, ասաց գեներալը: Նրանք վոչինչ չունեն: Գործարանները չեն աշխատում, գնացքները կանգ են առել: Մի ֆունտ հացի համար յերկու ֆունտ թղթագրամ են վճարում: Այ թե ինչ փող ե նրանց փողը:

— Իսկ ի՞նչպիսի բանակ ունեն նրանք. — հարցըրեց ատամանը:

— Ի՞նչ բանակ! Զինվորներ խոմ չեն, ցնցոտիներ են հագած, մերկամարմիններ են: Կոշիկ չունեն, զենք չունեն, հրամանատար չունեն, վոչինչ չունեն:

ՀՆՈՑՊԱՆԸ

Ճիշտ եր ասում գեներալը: Բոյլշէկները հրամանատարներ չունեյին:

Հենց նույն որը Մուրոմ քաղաքից բոյլշէկները նոր գունդ եյին ուղարկում պատերազմի: Խորհրդի նախագահը կանչեց իր մոտ ընկեր իւլան Դորոֆեյեվին և ասաց նրան:

— Դու նշանակված ես գնդի հրամանատար:

— Յես ի՞նչ հրամանատարություն կարող եմ
անել, — ասաց Իվան Դորոֆեյեվը, Յես այդ գործը
չգիտեմ:

Խորհրդի նախագահը պատասխանեց.

— Մենք ուսումնական հրամանատարներ չու-
նենք, իսկ դու հուսալի մարդ ես:

— Ախր յես հնոցպան եմ:

— Ի՞նչ կա վոր, յես ել փականագործ եմ,
ասաց Խորհրդի նախագահը, բայց տես, մի ամբողջ
քաղաք եմ կառավարում:

— Լավ, ինչ արած, — ասաց Իվան Դորոֆե-
յեվը, կապեց թուրը թարս և մեկնեց կովի ճակատ:

ԿԱՐՄԻՐՆԵՐԻՆ ՇՈՒՏՈՎ ՎԵՐՋ ԿԼԻՆԻ

Կոփվ եր Բուլոչկին ազարակի տակ: Սպի-
տակները կովում ելին կարմիրների հետ:

Սպիտակները զինվորական տարագով ելին
և շատ լավ ելին հագնակած, իսկ կարմիրները —
վորը կոշիկներով, վորը տրեխներով, վորը բորիկ,
վորն ել լաթ եր փաթաթել վոտքերին:

Սպիտակները կովել զիտելին: Նրանց թրն-
թանոթները կրակում ելին առանց վրիպելու,
իսկ կարմիրների կրակը նշանին չեր դիպչում:
Իվան Դորոֆեյեվի համարյա ամբողջ զունդը
կոտորվեց — վոչնչացավ:



— Յես ի՞նչ հրսմանատքը ունին կարող եմ անել:

Ճակատամարտից հետո գեներալ Սեմիկոլենովը հարց ու փորձ եր անում գերի ընկած կարմիր-բանակայինին:

- Ո՞վ եր ձեր գնդի հրամանատարը?
- Իվան Դորոֆեյեվը:
- Ո՞վ և նա. սպա յե՞:
- Վաչ, հնոցպան եւ:

Սրտնեղությունից գեներալի զլեխ ցավը բռնեց: Վիրավորական եր նրա համար կռվել հնոցպանի հետ: Նա իր ամբողջ կյանքում միայն գեներալների հետ եր կռվել:

— Իսկ վորքան զորք մնաց ձեզ մոտ, — հարցրեց գեներալը:

— Չեմ հաշվել, — պատասխանեց գերին: — Մենք մարդ շատ ունենք:

— Յեվ բոլորն ել հնոցպաններ են — հարցրեց գեներալը:

— Ինչու միայն հնոցպաններ. կոշկակարներ ել կան: Չուլողներ կան, դարեիններ կան, բեռնակիրներ կան:

Խորը մտածմունքների մեջ ընկավ գեներալը: Նա միթուղթ եր նայում: Իսկ թղթի վրա գրված եր.

8.000

5.000

30.000

70.000

150.000

100



Իվան Դորոֆեյեվի ամբողջ զունդը կոտորվեց:

Յեվ ելի մի շարք թվեր:

— Ի՞նչ ե գրված այդ թղթի վրա, — հարցուց
մի սպա գեներալին:

— Շուտով կարմիր կոշկակարներին վերջ
կլինի, — ասաց գեներալը:


— Այս թղթի վրա գրված ե, թե ինչքան
դրբ ե գալիս մեզ ոգնության: Ութ հազար ֆրան-
սիացիներ, հինգ հազար սերբեր, յերեսուն հազար
անգլիացիներ, յոթանասուն հազար չեխո-սլովակ-
ներ, մի 16 հազար ել բելգիացիք և կանադացիք
կլինեն: Յեվ ելի 100 մարդ ոռոմանացի:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՇՈԿՈԼԱԴ

Ճիշտ եր ասում գեներալը:

Մի գեղեցիկ որ ամեն կողմից հյուրեր յեկան
սպիտակների մոտ: Անգլիացիք ֆրենչներով և
հիսկիներով, ֆրանսիացիք կեպիներով և փե-
շերը յետ ծալված շինելներով, սերբերը կար-
կանդակաձև գլխարկներով, հույները շրջազգեստ-
ներով, անգլիական հրացանաձիգները փետրավոր
գլխարկներով, յապոնացիք գամաշներով: Յեվ
ելի ամերիկացիք, ելի բելգիացիք, ելի կանա-
դացիք: Յեվ մեկ ել՝ հարյուր հոգի ոռոմանացի:

Անգլիական գնդապետ կեյսոնը ասաց գենե-
րալ Սեմիկոլենովին:



Զեմ հաշվել — պատասխանեց գերին: — Մենք մարդ շտա-
ռանենք:

— Գեներալ, շուտով մենք ձեզ հետ միասին
ամբողջ Ռուսաստանը կնվաճենք։ Մենք ձեզ
նվերներ ենք բերել մեր թագավորից։ Բերել
ենք հանդերձան, շոկոլադ, շինելներ, տուփերով
կաթ, թնդանոթներ, տաք ժիլետներ, ինքնազիր
ծայրեր, շոքեկառքեր, ատամ-խորթիչներ։


— Շնորհակալ եմ, — ասաց գեներալ Սեմի-
կոլենովը։ Այսպիսի ոգնությամբ մենք շուտով
մինչև Մոսկվա կհասնենք։

Ճիշտ եր ասում գեներալը։ Սպիտակները
ամեն կողմից հարձակում սկսեցին։ Հյուսիսում
և արևելքում, հարավում և արևմուտքում — կռվի
ճակատ եր չորս բոլորը։

Գեներալ Սեմիկոլենովը գնդասեղներով շա-
րունակ նոր ու նոր դրոշակներ եր ամրացնում
քարտեզին։

Վերցված ե Արխանգելսկը,
Վերցված ե Յարիցինը,
Վերցված ե Կաղանը,
Վերցված ե Խարկովը,
Վերցված ե Պոլտավան,
Վերցված ե Կիևը,

— Կեցցե! — ասում եր գեներալը, — Որը մի
քաղաք ենք վերցնում։ Շնորհակալ ենք անգիտացի-
դաշնակիցներից !



— Ի՞նչ գերիներ, — Սեր Կարմիր-բանակայիներն են,

ՀՅՈՒՐԵՐԸ ԳՆԱՑԻՆ

Հնոցպան Իվան Դորոֆեյեվը նստած եր ար-
կերից քանդված խրճիթում։ Բակում խմբված
ելին զինվորները՝ անգլիական ֆրենչներով և
անգլիական հիսկիներով։

Դորոֆեյեվի մոտ Մոսկվայից մի ընկեր յեկավ։

Այս ի՞նչ անգլիացիներ են քեզ մոտ, — հար-
ցրեց նա, — գերիներ են, ի՞նչ ե։

— Ի՞նչ գերիներ, — պատասխանեց հնոց-
պանը։ — Մեր կարմիր-բանակայիններն են։ Շնոր-
հակալ ենք անգլիացիներից. զինվորներին նրանք
յետ ուղարկեցին, վոր մեր կողմը չանցնեն, իսկ
շինելներն ու արկերը մեղ թողին։ Հիմա ձմեռն
ել կարելի յե կռվել։

Իսկ գեներալ Սեմիկոլենովը, ճանապարհոր-
դական մահճակալին նստած հայոցում եր ան-
գլիացիներին, ֆրանսիացիներին, հույներին, իտա-
լացիներին և ոռոմանացիներին։

Բայց այստեղ նրան զեկուցեցին, վոր մի
սպա յե յեկել գլխավոր շտաբից։

— Շուտով կարմիրներին վերջ կլինի, — զե-
կուցեց սպան։ — Գեներալ Մամոնտովը անցել ե
կարմիրների թիկունքը։ Հեծելազորի մի ամբողջ
կորպուս կա նրա հետ։ Մենք հարձակվում ենք
Վորոնեժի վրա, Զերնիգովի վրա, Որյով վրա։



Իվան Դորոֆեյեվը ձեռւ վրա։

ԳԵՆԵՐԱԼ ՍԵՄԻԿՈՂԵՆՈՎԸ ՆՈՐԻՑ զվարթացավ:
— Հիմա մենք առանց դաշնակիցների յել
յոլա կդնանք, — ասաց գեներալը: — Պատերազմում
ամենապաջին տեղը բոնում ե հեծելազորը:
Մեր ձիյերը կուշտ են ու կոկիկ, իսկ բոյլեկիկ-
ներինը՝ մի մի սատկած յաբու: Մեր բոլոր
գեներալները սպիտակ ձիյերով են ման գալիս,
իսկ լենինը — ով գիտե — իսկի մի քոսոտ ձի յել
չի նստել:

ՀՆՈՑԹԱՆԸ ԶԻՈՒ ՎՐԱ

Ճիշտ եր ասում գեներալը:
Լենինը ձի չեր նստում: Բայց լենինը գի-
տեր, վոր առանց հեծելազորի վոչինչ գլուխ չի
գա, նա ասաց.

Պրոյետարակեր, ձի հեծել!

Սկսեցին ձիյեր հավաքել ամեն տեղից: Խի-
զակ մարտիկ Բուդյոննուն նշանակեցին հեծելա-
զորի հրամանատար:

Զի նստեց նաև հնոցպան Իվան Դորոֆեյեվը:
Սևաթույր եր նրա ձին, բաշը կարմիր ժապա-
վեններով զարդարված, պոչը — մինչև գետին:

Իվան Դորեֆեյեվը ձին հեծած՝ բլուրը բարձ-
րացավ: Իսկ գեներալ Սեմիկողենովը իր սպիտակ
ձին նստած — հեռադիտակով նայում եր Դորո-
ֆեյեվին:

«Մի դրան տես, մտածում ե նա, ինչպես ե
զարդարվել: Շուտով թամբից դուրս կթռչես:
Իսկ մի ամսից հետո սպիտակ ձին ոլանում
եր ամբողջ թափով: Դա գեներալ Սեմիկողենովն
եր փախչում-ազատվում հնոցպանից:
— Վոչինչ, — զոռում եր գեներալ Սեմիկողե-
նովը սրարշավ: — Մենք յերկար ժամանակով չենք
փախչում: Կարմիրներին շուտով վերջ կլինի: Շո-
գենավերով մեզ տանկեր են գալիս!»

ՏԱՆԿԵՐ ՅԵՎ ՍԱՀՆԱԿՆԵՐ

Ճիշտ եր ասում գեներալը:
Շողենավերով տանկեր յեկան Անգլիայից:
Յերեք տանկ ել գեներալ Սեմիկողենովին բաժին
ընկավ: Գեներալը մոտեցավ տանկին, ձեռքով
խփեց նրա յերկաթե զբահին և ասաց սպաներին.

— Հիանալի կրիա յե: Սա խրամատներ ել
կճեղքի, սար ել կվերցնի: Ծառերը կտրատում ե
հարդի պես: Մի փորձիր նրան բաց թողնել
անտառում — կես ժամից դատարկ տեղ կմա-
տկանակից: Նրա առաջից թնդանոթներ են, յե-
տերից գնդացիրներ:

Նա մի այնպիսի զրահ ունի, վոր գնդակից չի
ծակվում և արկերը իրանից յետ ե շպրտում:
Գեներալը կանչեց իր մոտ սպային և մի
թուղթ տվեց նրան: Թղթի վրա գրված եր՝

2-1076

Հ 6113-66



Կարմիր-բանակայիններ, անձնատուր յեղեք!
Վաղը մենք սանկեր ենք բաց բողնում ձեր դեմ!

— Պորուչիկ, — ասաց նա, — կարմիրների մոտ
2 այերոպլան ուղարկեք: Թող նրանք իմ թեր-
թիկները վերսկից գցեն կարմիր-բան: Այիններին:

Հետեւյալ որը վաղ առավոտյան յարեք տանկ
վորոտացին շղթաներով ու սողացին դեպի բոյլ-
շեփուների խրամատները: Կարմիրները վախեցան
ու փախուստի դիմեցին: Իսկ տանկերը հրանոթ-
ներից ու գնդացիրներից կրակ ելին տեղում
փախչողների վրա:

Գեներալ Սեմիկոլենովը կանգնած եր սարի
վրա և այս բոլորը տեսնում եր հեռադիտակով:

— Կարմիրների վերջն ե, — ասաց նա: Տան-
կերի դեմ չես կարող գնալ:

Հազիվ եր նա բերանը փակել, մեկ ել բնչ
տեսնի. հանկարծ տանկերից մեկը շուռ յեկավ
և ընկավ կողքի, Նրա միջից սկսեցին մարդիկ
դուրս թափվել:

— Ինչումն ե բանը, — հարցըց գեներալ Սե-
միկոլենովը:

— Բոյլշեփիների արկը դիպավ, — պատաս-
խանեց սպան:

— Զե՞ վոր տանկը չի վախենում արկերից!
Զարմացավ գեներալ Սեմիկոլենովը:

Զիավորը սլացավ դեպի տանկը, վերադար-
ձավ ու դեկուցեց.

— Խրվել ե ցեխում, ձերդ գերազանցություն:
— Վոչինչ, — ասաց գեներալը — շուտով ել
ցեխ չի լինի: Զմեռն ե գալիս: Այ, այն ժամա-
նակ մենք նրանց ցույց կտանք:

Զմեռը յեկավ: Սպիտակները նահանջում եյին
հա նահանջում: Տանկերը նրանց չեյին ոգնում:

Կարմիր հրաձիգները սկսեցին ման գալ յերեք
ձի լծած թեթև սահնակներով: Վրա յե տալիս
զընդզենդոցով այդ յեռաձի սահնակը, հրաձիգ-
ները կրակում են սպիտակներին և առաջ են
գնում, հապա մի փորձիր, հասիր!

1920 թվի հունվարին կարմիրների հեծելա-
զորը մտավ կողակների մայրաքաղաք Նովչեր-
կասկ:

Գնում եր գունդը գնդի յետեից: Մի դնդի
յետեից վորոտում եյին յերկաթե կրիաները:

Սրանք նովչերկասկի կռվում սպիտակներից
խլած տանկերն եյին:

Իսկ նրանց յետեից սահում եյին սահնակ-
ները՝ գնդացիրները վրան: Սահնակների վրա
խոշոր տառերով գրված եր.

Դուի դեպի մեզ սանկերով, մենք դեպի ձեզ
սահնակներով:

Սա հնոցպան իվան Դորոֆեյվի գունդն եր:

ԻՆՉԻ ՀԱՄԱՐ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

Գեներալ Սեմեկոլենովը փախավ արտասահման։ Նա մի գիրք գրեց Կարմիր բանակի մասին։ Ահա թի ի՞նչ եր ասված այդ գրքում։

— Ինչու մեզ ջարդեցին։ Մենք փորձված հրամանատարներ ունեինք, մենք կուշտ եյինք, լավ հագնված։ մեզ ոգնում եյին դաշնակիցները, մենք տանկեր ունեինք։ Իսկ կարմիրները վոչինչ չունեյին։ Բայց կարմիրները գիտեյին, թե ինչի համար եյին կրվում, դրա համար ել հաղթեցին։ Պետք ե ճիշտն ասել. բանվորներն ու գյուղացիները վոչ թե մեզ հետ են, այլ նրանց հետ։

* * *

Ճիշտ եր ասում գեներալը։

Ցես գրեցի, վերջացրի այս գիրքը և հանկարծ մի աղմուկ հասավ ականջիս։

Մոտ վազեցի ըրտամուտին ու ցած նայեցի։ Ցածում զորքեր եյին անցնում։ Գնում եր հետեվակը։ Գնում եր հեծելազորը։ Գնում եյին տանկերը։

Ցես վեր նայեցի։ Վերեռում այերոպլաններն եյին սավառնում։

Այս ի՞նչ ե, — մտածեցի յես։

Ցեվ հանկարծ հիշեցի. չե վոր փետրվարի 23-ն ե այսոր, կարմիր բանակի տոնն ե այսոր։

Այստեղ չե արդյոք Դորոֆեյեվը, — մտածեցի յես և բաց արի լուսամուտը։


— Դորոֆեյեվ! — կանչեցի վերեկց, իվան Դորոֆեյեվ!

Շուռ յեկան հետեակները։ Շուռ յեկան ձիավորները։ Շուռ յեկավ շոփերը զրահապատից։ Ահա ինչքան են նրանք — իվան Դորոֆեյեվները։

Նվազում եր յերաժշտությունը։

Փողոցներով անցնում եր լավ հագնված և լավ վարժված բանակը։ Դա ձուլողների, դարձինների, հնոցպանների, բեռնակիրների, տպագրիչների, կոշկակարների, գյուղացիների բանակն եր անցնում։

Դա իվան Դորոֆեյեվների բանակն եր անցնում։



ԳԱՀԱՆՁԵՑ

ՄԵՐ ԳՐԱՑՈՒՑԱԿԸ, ՎՈՐ

ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶՐԻ.

ԴԻՄԵԼ՝ Մոսկվա, Никольская, 10.

ЦЕНТРИЗДАТ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0390766

27145

5579

10 ԿՈՊ.

Цена
X. 2.

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОЛГОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



Н. ОЛЕЙНИКОВ

Танки и санки

(перевод с русского)

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР.
Москва, центр, Никольская, 10.